ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

22.01. 2016
Ք. Իջևան

Ներկա էին խորհրդի բոլոր անդամները:

Օրակարգ

1. Մասնաճյուղի զարգացման 2016-20թթ. ռազմավարական ծրագրի նախագծի քննարկում /Զեկուցող՝ Ս. Առաքելյան/:

ԼՍԵՑԻՆ՝

Ս. Առաքելյանը հանգամանալից ներկայացրեց ՌԾ-ի նախագիծը:

Ռազմավարական առաջին նպատակը որակյալ կրթությունն է: Նա նշեց, որ այս ոլորտում մասնաճյուղի նպատակն է տրամադրել աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ բարձորակ կրթական ծրագրեր:

Ռազմավարական երկրորդ նպատակը արդիական հետազոտությունները և նորարարություններն են: Այս ոլորտում մասնաճյուղի նպատակն է. «Մեծացնել մասնաճյուղի գիտական ներուժի ներդրումը տարածաշրջանի տնտեսական զարգացման և հասարակության բարեկեցության բարձրացման գործում, խրախուսել դասախոսական կազմի ակտիվ ներգրավումը հետազոտական աշխատանքներում»: Այս նպատակը հաջողությամբ իրականացնելու համար անհրաժեշտ է ստեղծել նախադրյալներ և նպաստող մեխանիզմներ՝ հետազոտությունների ծավալի աճի և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության ընդլայնման համար:

Ռազմավարական երրորդ նպատակը զարգացնել հանրային ներգրավումը և ծառայությունների համակարգը, ապահովել հասարակայնության հետ կապերի հետագա զարգացումը:

Ռազմավարական չորրորդ նպատակը որակյալ մարդկային ռեսուրսներն են: Ռազմավարական այս խնդրի համար անհրաժեշտ է զարգացնել դասախոսական կազմի ներուժը, նրանց տրամադրել շարունակական

կատարելագործման հնարավորություններ և ժամանակակից ու բարենպաստ աշխատանքային միջավայր:

Հաջորդ՝ հինգերորդ նպատակը որակյալ ենթակառուցվածքներն են: Այս ոլորտում մեր նպատակն է ստեղծել տեխնոլոգիապես հագեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայր՝ բոլոր ուսանողների և աշխատողների արդյունավետ գործունեությունը խթանելու համար:

Ռազմավարական ծրագրի վեցերորդ նպատակը խթանել ուսանողական կազմակերպությունների աշխատանքը և զարգացնել ուսանողական օժանդակ ծառայություններ:

Ռազմավարական ծրագրի յոթերորդ նպատակը ընդունելության բազմազանեցումը և համապատասխանությունն է. օպտիմալացնել ընդունելությունը և համապատասխանեցնել երկրի զարգացման կարիքներին, հանրության և աշխատաշուկայի պահանջներին:

Ռազմավարական ծրագրի ութերորդ նպատակը ֆինանսական կայունությունը և արդյունավետ կառավարումն է. ապահովել ֆինանսական կայուն և բազմազանեցված հոսքերը և բարձրացնել դրանց կառավարման արդյունավետությունը:

Ռազմավարական ծրագրի իններորդ նպատակը միջազգայնացումը և գործակցությունն է. զարգացնել մասնաճյուղի միջազգայնացմանը նպաստող քաղաքականություն և ստեղծել աջակցող եռալեզու կայք:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Պ.գ.թ., դոցենտ Վ. Ալեքսանյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը, կ.գ.թ. Ս. Խաչատրյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը, հ.գ.թ. Լ. Սարգսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

-Հավանության արժանացնել 2016-20թթ. ռազմավարական ծրագրի նախագիծը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ. Ալեքսանյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. Խաչատրյան